

**ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
Պալումական գիրությունների թեկնածու**

**ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ
Պալումական գիրությունների թեկնածու**

ՃԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՇՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մեր նախնիքը գովելի ճարտարամտությամբ և նուանդով ժամանակի աղետները արձանագրել են այս և այն մատյանների վերջերը՝ շատակարանի ձևով,՝ գրում է Գյուտ քահանա Սովորացի.՝ այնպես որ այժմ մեր բազմաթիվ գրչագրերի հիշատակարանները պարզում են ու լուսաբառում պատմական և ժամանակագրական շատ սխալներ... շատ նոր իրողություններ հանդես բերում... ուսումնավայր վաճերի արտագրության հմուտ անձանց և այլ անուններ ցուց տալիս, որոնք առանց այդ հիշատակարանների կորած են մեզ համար»¹: Ահա այս պատճառով ձեռագրերի հիշատակարանները բազմիցս օգտագործվել են մեր ժողովրդի պատմության տարբեր բնագավառներին նվիրված ուսումնասիրություններում և դրանց հիմնա վրա կատարվել արժեքավոր ճշգրտումներ:

Հայերն ձեռագրերի հիշատակարանների օգտագործմանը հանդիպում ենք դեռևս միջնադարյան հայ պատմիչների երկերում (Մխիթար Այրիվանեցի, Ստեփանոս Օքբանյան, Առաքել Դավիթեցի, Զաքարիա Քանաքեցի): Հիշատակարաններից մեծապես օգտվել են Մ. Չամչանը, Ղ. Ալիշանը, Գ. Զարքիանալյանը, Ն. Ակիմյանը, Հ. Ուլյանը, Լ. Խաչիկյանը և ուրիշներ:

Հայերն ձեռագրերի հիշատակարանները հարուստ մյութ են պարունակում նաև պատմամշակութային հուշարձանների կառուցման, նորոգման, ավերումների, վերականգնումների, դրանց ընդհանուր ճակատագրի ու մի շարք այլ հարցերի մասին:

Ճարտարապետական հուշարձանի ուսումնասիրման հիմնական աղբյուրը, անշուշտ, իմքը հուշարձանն է՝ իր վրա ու իր մասին եղած վիմական արձանագրություններով: Վերջինիս բացակայության դեպքում առաջնային աղբյուր են դառնում մատենագրական երկերը, որոնց հաղորդած տեղեկությունների պակասն է՝ հաճախ լրացնում է ձեռագրի հիշատակարանը:

Երբ հիշատակարանում նշվում է ձեռագրի գրության վայրը, ուրեմն այդ հուշարձանի մասին աղոքն վկայություն ունենք: Երբ նշվում է նաև մերձական զյուղը, զավառը, նարանգը կամ տեղագրական որևէ տվյալ, հուշարձանի մասին մեր գիտելիքները հարստանում են: Պատմական հուշարձանների վերաբերյալ մենք ունենք այս կարգի հազարավոր վկայություններ:

¹ Գյուտ քահանա Աղանյան, «Հայ գրչագրներ» և «Դարձնալ հայ գրչագրերի մասին», «Արձականք», Թիֆլիս, 1888, հմ.2, լ. 21, հմ. 4, լ. 49-51:

Բերենք դրանցից մի քանիսը.

Մատենադարանի արխիվում կա պապիսի մի հիշատակարան. «Գրեցաւ և աւարտեաւ Սուրբ Աւետարանս ի գաւառիս Կաենո, ի ձորս որ կոչի Միափոր, ի վաճա Զարմազանց, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփանոսի»: Մանոթագրությունից իմանում ենք, որ մեսուրայան երկաթագրով մեծադիր մազաղաթյա Ավետարանից թղթատել և որպես հիշատակ տարեկ են բոլոր թերթերը, մնացել է մի թերթ, բարեքախտաբար՝ հիշատակարանը, որն արտագրել է ազգագրագետ Ս. Քամալյանը²: Այժմ այդ թերթն էլ չկա, բայց պահպանվել է Կաենո գավառի Միափոր ձորի /այժմ՝ Շամշադի/ Զարմազանից Ս. Ստեփանոս վաճիք մասին միակ այս վկայությունը:

1184 թ. Միհիթր Գոշը իր «Դատատանազիրքն» ավարտում է «յաշխարհիս Առանայ, ի նահանջիս, որ կոչի մայրաքաղաքին Գանձակ, յանապատս և յեղբայրանցոց անուանեալ Դասոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցեաց Կուսատանացն յիշեցելոյ»³:

1304 թ. Ավետարան է գրվում «ի մայրաքաղաքիս, որ կոչի Նախիջաւան, մեծ նահապետին Նոյի շիմեալ ձեռամբ տունս իիր: Եւ կատարեցաւ նադաշութիւն սորայ ի մեծ դատակերտն Աստապատ կոչեցեալ, առ ափն թեղաշարժ և ծիածաւալ զետոյս Երասխայ»⁴:

1319 թ. Խաչատոր գրիչը Ավետարան է ընդորինակում «...ի մայրաքաղաքիս Սարայ /Բերքե/, որ է ի հիւսիսոյ կողմ, մերձ առ ծովուն Կասիխականի, ընդ որում շորջ պատէ զնովաւ մեծ և հզօր գետն էթիլ, և ընդ հովանեաւ Սուրբ Աստուածանին և Կենսակիր Սուրբ Աշամին»⁵: Այժմ ո՞չ այդ քաղաքը կա, ո՞չ էլ վաճը, իսկ դրանց լինելիությունը հավաստող միակ ձեռագիրը գտնվում է Վիեննայի Միհիթարյան Մատենադարանում:

Այս ընդհանուր բնույթի տեղեկություններից բացի, հիշատակարաններում վկայություններ կան նաև այս կամ այն հուշարձանի կառուցման, վերանորոգման, նրանց կառուցող վարպետների, ճարտարապետների, հովանավորողների, նովինուկ շինարարական բնույթի առանձին մանրամասների վերաբերյալ:

Ժարտարապետական հուշարձանի նորոգման մասին ձեռագրական ամենահին հիշատակարանը վեցերորդ դարից է: Այն օգտագործվել է Զաքարիա Քամարենցու «Սուրբ ովհանուն Յովհանու վանից» կոնդակում, որը կազմել է հնը «թէ պատմագրեաց, թէ հիշատակարանաց, թէ արձանաց և թէ լոյո իմաստուն արանց և ի գիտուն ծերոց... Կ/60/ ամի կենաց իմոց, թվին Ռ.Շ.Ղ/1687/-, գրում է թեղինակը⁶: «Կոնդակը» նախ մուծում է իր կողմից ընդորինակված ժիշտում գրված Տոնականում⁷, ապա իր Պատմագրում⁸: «Եւ եղան գործառնութիւնս այսմ իրի (այսինքն՝ գրիչ Գեորգ Մանկիկի կողմից Աշոտ Դվինցի քահա-

² Ա. Մաթենոսյան, Հայերն ծնուազրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., Երևան, 1988, լ. 340: Այսուհետև՝ հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ.:

³ Նոյն գիրում, լ. 243:

⁴ Լ. Խաչիկյան, ԺԴ դ. հայերն ծնուազրերի հիշատակարաններ, Երևան, 1950, լ. 25:

⁵ Նոյն գիրում, լ. 156-157:

⁶ Մագրինադարան, ձևո. հմք 1522, լ. 484ր:

⁷ Նոյն գիրում, լ. 483ա, 493ր:

⁸ Մագրինադարան, ձևո. հմք. 3024, լ. 132ա-ից:

նայի համար, ձեռագիրը Հովանավանքում գրելը) յայսմ ամի, յորում վերատին նորոգեցած Սուրբ Կարապետու մեծամոչակ՝ քարամբ պատուականօք, քանզի յառաջ փայտի էր ծածկեալ զլուխ սորա, զոր այս այր Աշուու բազում աշխատութիւն յանձն առեալ՝ կիսատ թիակօք զկիրն ի վեր հանելով՝ տայր ի շալակս եղբարցն տանել:

Արդ, ընդ հովանեաւ սորին Սորոյն Կարապետիս, զծազրեալ եղև այս քաղցրաճաշակ Պատմութիւնս, ի մէջ բազմախուոն միանձնեցեալ եղբայրութեանս և տուա ի սոյն եղբայրանցու սորը, լիշտակ հոգույ իրոց:

Եւ եսոյ եղև հայր վաճացս յամի թուականութեան Հայոց նոր եղելոյ [ի] երկրորդ ամի, յատուրս տեան Մովսիսի կաթողիկոսի, որ ի Վաղարշապատ»⁹:

573 թվականը ո՞չ ձեռագրի գրության, ո՞չ է Ս. Հովհաննու վաճքի փայտն ծածկը փոխելու ժամանակն է, այլ Աշուտի վաճախայր դառնալու տարին է: Ծածկը փոխվել է 573 թվականից առաջ:

Հիշատակարանն օգտագործել են Հովհաննու վաճքի պատմությանն անդրադարձող պատմաբանները, բանասերները, ճարտարապետները: Դ. Ալիշանը հիշատակարանում հիշված «Անոյ» փոխարեն առաջարկում է «Դըմոյ», իսկ «յամի թագաւորութեանս Հայոց նոր եղելոյ երկրորդ ամի» հայսադասության մեջ երկրորդ բառի առաջ ենթադրում է, որ գրված պեսք է լինի «քսան կամ ԻԲ(22)...»¹⁰, այսինքն՝ 551+22=573, որը համապատասխանում է Մովսես Կաթողիկոսի գահակալության տարիներին /573-604 թթ./:

Կ. Ղափաղարյանը կասկածում է հիշատակարանի թվականի վրա, բայց գտնում է, որ վաճքի փայտածածկը քարով փոխարինելը համապատասխանում է «հավանաբար առաջին շրջանի վերջին կամ երկրորդ՝ վերելքի նախօրյակին, այսինքն՝ V դարի երկրորդ կեսին կամ VI դարին»: Նա վկայակոչում է Գ. Հովսեփյանին, որը համարյա նոյն տեսակետն է հայտնում¹¹: Ուրեմն, հնարավոր է, որ ավելի քան հազարամյա հիշատակարանում որոշ թյուրագրություններ լինեն, բայց արձանագրված իրողությունը և հուշարձանի ուսումնասիրությունը լրացնում և հաստատում են միմյանց:

Հիշատակարանները երեմն ճշգրտում են արձանագրությունների որոշ տվյալներ, սրբագրում հուշարձանի անունները:

Զեռագրերի հիշատակարանները մեծ կարևորություն ունեն նաև Սևանա կղզու հուշարձանների անունների, թվի, շինարարության ժամանակի ճշգրտման հարցում:

Սևանա կղզու պատմությանը երեք փոքրիկ աշխատություններ են Ավիրված, որոնք գրված են տեղի բանիմաց առաջնորդների խնդրանքով (Վերջինը՝ առաջնորդի ձեռքով), որոնք անցյալի պատմությունը շարադրել են հայոց պատմագրքերի վկայությունների, իսկ իրենց շրջանի պատմությունը՝ որպես ականատես՝ սեփական աշքով տեսածի և լսածի հիման վրա:

Զաքարիա Գուլասպյան-Բեհրությանը 1852 թ. գրում է, որ կղզում կա Ս. Առաքելոց եկեղեցին «բարձրաբեր և զմբեթազարդ», որը կից ունի «խորան փոքրազոյմ» ճգնարան Մարիամ թագուհոյ... հուա հիմն է միւս եկեղեցին, որ յանուն սրբոյ Ցովհաննու Մկրտչի՝

⁹ Հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., 1, 11:

¹⁰ Դ. Ալիշան, Այրարափ, Վանեսիկի, 1895, լ. 165, ծն. 3

¹¹ Կ. Ղափաղարյան, Հովհաննու վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, լ. 13-17:

փոքր զնա, ճողակես ամսին և զմբեթունակ... առ սովու են խուղը կրոնաւորաց...»:

Եվ եկեղեցին «Սրբությ Աստուածածնի, որ է ի ստորոտ լերին: Այս եկեղեցի շինեցաւ ի Մարիամ թագություն... ըստ վկայելոյ տեառն Ստեփանոսի... Օրբելեամց»¹²:

Մյուս մատենագիրը՝ Մանուկ Կյումուշխանեցին, գրում է, որ Ս. Հովհաննու Կարապետ եկեղեցին կառուցվել է Լուսավորչաշեն Ս. Հարության տաճարին մերձ: Ս. Հարությունը կանգնած էր հեթանոսական մեհյանի տեղում, «ի մէջ կղզյոն, ի բարձրադիտակ զագաթն լերին, էր կառուցեալ մեհեանն այն՝ որ ունէր զննանութիւն սրբոյ լերինն Գողգոթայ, վասն որոյ... անուանեցին սուրբ Յարութիւն», իսկ նորակառուցը՝ Ս. Կարապետ:

Մարիամ տիկինը և Մաշտոց Եղագարդեցին կառուցում են «Սուրբ Առաքելոցն ի գագաթան լերին զմբեթաւոր և հոյակապ մերձ Աշամաւոր սուրբ տաճարացն (այսինքն՝ Ս. Հարության և Ս. Կարապետին - Ս.Մ., Ա.Ղ.): Իսկ ստորոտին լերինն կառուցին յանուն Սուրբ Աստուածածնի հոյակապ ժողովարան և աղօթատեղի»¹³:

Այդպես է պատմում նաև Սևանի անապատի վերջին առաջնորդ Սարգս Փիլոյանը¹⁴:

Ուրեմն, Սևանա կղզու բլրի գագաթին կանգուն հուշարձաններից ամենաբարձրադիրն ու մեծը՝ Ս. Առաքելոց եկեղեցին է, գրանից մի փոքր արևմուտք՝ չափերով համեմատաբար փոքր եկեղեցին՝ Ս. Կարապետը, իսկ Ս. Աստվածածինը կառուցված է եղել բլրի ստորոտում, ընդ որում՝ առաջին երկուսը զմբեթավոր են, իսկ Ս. Աստվածածինը՝ ոչ:

Այսպես է հիշատակված նաև բանասիրության մեջ: Ալիշանը «Սիսական»-ում նշում է «Երեք եկեղեցիք հնաշէնք. Առաջին և զլխաւոր Առաքելոցն», երկրորդ՝ Ս. Կարապետը և երրորդը՝ եկեղեցին, որ «յանուն Տիրություն Սր Աստուածածնի՝ կանգնեալ յարևմտեան հիւսային կողմանն կղզյոն ի դիրի //հարթության վրա՝ ծնբ.՝ Ս.Մ., Ա.Ղ.») մեծագոյն է քան զառաջինն և նոյնպես քարակերտ, այլ անգմբէթ, սագաշէն...»¹⁵:

Այս գրքի 82, 87 էջերում կան Ս. Աստվածածնի լուսամկարները, ինչպես նաև վերանորոգման արձանագրությունները, որոնք գտնվում են նաև Մ. Կյումուշխանեցու, Շահնարությանցի, Ե. Լալայանի երկերում:

Այդպես էլ ընդունված էր մինչև վերջերս:

Սակայն վիճակը փոխվեց Լ. Մելիքսեթ Բեկի մի ենթադրությամբ: Սևանա կղզու փոքր եկեղեցու՝ Ս. Կարապետի վրա կա մի արձանագրություն, որից իմանում ենք, որ Սյունյաց տիկին Մարիամը Բոր՝ Աշոտ Բագրատունու միաբանությամբ, այստեղ կառուցում է Ս. Առաքելոց եկեղեցին: Աշոտը միաբանությանը Ավիրում է մի շարք զյուղեր, նաև այգիներ՝ Գառնիից և Երևանից: Արձանագրության վերջում նշված է «Թվին ՑԺԳ» /874/: Սույն արձանագրությունից օգտվել է Ստ. Օրբելյանն իր «Պատմությունը շարադրելիս» լրացնելով, որ Մարիամ իշխանություն և Մաշտոց Եղագարդեցին կղզում կառուցել են երկու եկեղեցի՝ Ավիրված Առաքյալներին և Աստվածածին:

Արձանագրությունը համարվել է շինարարական, իսկ 874 թվականը՝ շինարարության ավարտման տարին:

¹² Մագրենադարան, ձեռ. № 10655.

¹³ Մ. Կյումուշխանեցի, Պատմություն անցից անցկոց Սևանայ վանուց, Վաղարշապատ, 1871, լ. 8-9:

¹⁴ Ս. Փիլոյան, Սևանի վանքը, «Տովի» շարադրելոր, Թիֆլիս, 1906, լ. 133:

¹⁵ Ն. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, լ. 80-81:

Լ. Մելիքսեթ Բենկը արձանագրությունը հրատարակելիս, Բենվեռով Ստ. Օրբելյանի հաղորդած տեղեկությունների վրա, կանգուն փոքր եկեղեցին, որի վրա սույն արձանագրությունն է, համարում է Ս. Առաքելոց: Այս փոքր եկեղեցու գմբեթի վրա կա այսպիսի մի արձանագրություն ևս «ԹՎՀԱ ՌԴ /1651/ նորոգեցաւ Սբ Կարապետս»¹⁶:

Անվան հետ կապված իրարամերժ երկու արձանագրությունների առկայությունը միևնույն եկեղեցու վրա Լ. Մելիքսեթ Բենկի կողմից պատճառաբանվում է այսպես. «Թվացող հակասությունը դժվար չէ վերացնել, եթե ընդունենք, որ վերջին արձանագրության մեջ խոսքը ոչ թե տաճարի հիմնադրման մասին է, որ տեղի է ունեցել 874 թ., այլ 1651-1750 թթ. միջև տեղի ունեցած վերակառուցման մասին: Այստեղից դժվար չէ ենթադրել, որ սկզբում գլուրված լինելով Ս. Առաքյալներին, տաճարը հետագայում «նորոգվում» է՝ նվիրվելով արդեն, ինչպես հաճախ լինում էր, որը սրբի՝ Ս. Կարապետի»¹⁷:

Ստ. Մնացականյանն անվերապահորն ընդունում է սույն կարծիքը¹⁸:

Այժմ Սևանա կղզում գրված հշանավոր միարանների ձեռագրերի հիշատակադրանների, տեղի բուշարձանների վիմարձանագրությունների և նորագույն ուսումնասիրությունների օգնությամբ փորձենք սրբազրել թյուրիմացությունները:

Սևանի Ս. Կարապետ փոքր եկեղեցու հարավային մոտարքի արևելյան պատին կա մի արձանագրություն Կիրակոս աքեղայի կողմից նույն Ս. Կարապետի եկեղեցուն դուռ նվիրելու մասին, որը կատարվել է ՌԿԲ(1613) թվականին: Նշանակում է, որ սույն եկեղեցին ենթադրյալ նորոգ անուն «ստանալուց», այսինքն՝ 1651-1750 թվականներից առաջ, Ս. Կարապետ անունն է ունեցել:

Հետևաբար առաջ քաշված վարկածն անհիմն է:

Ավելին. Մաշտոցի անվան Մատունադարանի 1301 ձեռագիրը գրված է Սևանցի Կարապետ քահանայի և Համավորի որդի Դամիելի (հետագայում նույն տեղի Վարդապետարանի բարունապետ) ձեռքով, 1451 թվականին «յերկիր Գեղամայ, ի Սևան կղզի, ընդ հովանեսաւ Սուրբ Աստուծածնիս, և Սուրբ Առաքելոց, և Սուրբ Կարապետիս և Սուրբ Լուսաւորչիս...»: Այս հիշատակարանն էլ վկայում է, որ Սևանի Ս. Կարապետը գոյություն ուներ Մելիքսեթ Բենկի ենթադրած «վերանվանումից» դեռևս 200-300 տարի առաջ: Կրկին ամրապնդվում է Սևանի փոքր եկեղեցու Ս. Կարապետ տոհմիկ անվանումը:

Բերված հիշատակարանը միաժամանակ ճշտում է նաև 903 թ. կառուցված, բայց այժմ ավեր եկեղեցու անունը՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ: Ի դեպք 903 թ. Սևանի Սարգիս առաջնորդի կողմից կառուցված եկեղեցու մասին արձանագրությունը ևս պահպանվել է փոքր եկեղեցու՝ Ս. Կարապետի վրա:

Այս փոքր եկեղեցու վրա արձանագրություններ կան նաև այլ դարերից: Նշանակում է, որ կղզու հնագույն կառուցմերի մասին արձանագրությունները գրում էին ամենահին եկեղեցու՝ Ս. Կարապետի որմերին:

Եթե Դամիելի հիշատակարանը հաստատում է փոքր եկեղեցու Ս. Կարապետ անվա-

¹⁶ Ա. Ղազարոսյան, Սևանա կղզու և կեղեցիները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, լ. 52, հմք 1, Այսուհետև՝ Սևանա կղզու և կեղեցիները:

¹⁷ Ա. Ղազարոսյան, Սևանա կղզու և կեղեցիները, լ. 51:

¹⁸ Տնի Ստ. Մնացականյան, Հայ ճարդարավավորության Սյունիքի դպրոցը. Երևան, 1960, լ. 27:

Առաջ և նրա միաժամանակյա գոյությունը Ս. Առաքելոցի, Ս. Աստվածածինի և Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցիների թեոտ, ապա Մաշտոց Եղվարդեցու աշակերտ և կենացիր Ստեփանոս Սևանցու 893 թ. հիշատակարան-վարձը ճշտում է Ս. Առաքելոցի կառուցման ժամանակը և արձանագրության բնույթը, այսինքն՝ որ 874 թ. արձանագրությունը ոչ թե շինարարական, այլ նվիրատվական արձանագրություն է, ուստի 874 թվականը ոչ թե Եկեղեցու շինարարության ավարտին, այլ վաճիռն արված նվիրատվության թվականն է և Աշոտ Բագրատունու՝ Քու գետի ճակատամարտից վերադառնալու տարին:

Ստեփանոսը՝ Մաշտոց Եղվարդեցու աշակերտը և նրա վարքագիրը, «Մաշտոց» ծիստակարանում նշում է Սևանի Եկեղեցիների թիվը «Եկեղեցիք Գ» /երեք/: Հիշատակարանն ունի այսպիսի ժամանակագրություն. «Եւ յայս ամի հասել է՝ գրության 893 թվականին/ յորում կարգեցի զաւակաւար գրումնս, էր ամք կենաց նորա հայինքն Մաշտոցի (ծնթ.- Ս.Մ., Ս.Դ./ սակաւ ինչ քան զվարտուն ամ, իսկ որ մեկնեալն էր ի կերակրոց և ի բոլոր իսկ հնշութեանց մարմնոյ՝ Լ.Գ. /33/ ամք, և ի շինութեան տեղլուս իթ /22/ ամք»: Ուրեմն, Սևանա կեղում 893 թվականին արդեն 22 տարի գրություն ունեին Առաքելոց միաբանության երեք Եկեղեցիները՝ Ս. Կարապետ, Ս. Առաքելոց, Ս. Աստվածածին, որոնցից վերջին երկուսի շինարարությունն ավարտվել էր 874 թվականից երեք տարի առաջ (893-22=871 թվական)՝¹⁹:

Նվիրատվությունը, ըստ հիշատակարանի, Ս. Առաքելոցի շինարարությունից երեք տարի անց է եղել:

Հուշարձանախմբի այժմ կանգուն հնագույն եկեղեցին Ս. Կարապետն է, ինչպես վկայում է հայ ճարտարապետության խորը գիտակ Ն. Տոկարսկին՝²⁰: Ս. Կարապետի օրինակով էլ և այլ չափերով կառուցվել է Ս. Առաքելոց եկեղեցին:

Որ բլրի գագաթին կառուցված մեծ եկեղեցին Ս. Առաքելոցն է, վկայում է նաև Դամիել Սևանցի բարունապետի՝ սույն եկեղեցուն նվիրված դուան վրայի արձանագրությունը, գըրված 1486 թվականին /ՀՊԹ/: Մինչ այս, Ստեփանոս Սևանցին հիշատակարանում գրում է, որ իր ուսուցիչը Ս. Առաքելոց ովատ կամ միաբանություն է հիմնել Սևանում և կառուցել եկեղեցիներ, «որ յանուն իրենանց /այսինքն/ Առաքելոց/ կանգնեալ են ի ձեռն սուրբ հաւան Մաշտոցի»:

Նշանակում է, եկեղեցիներից մեկը կրել է Ս. Առաքելոց անունը: Ս. Աստվածածինը եղել է բլրի ստորոտում և նույնպես չի ունեցել թվակիր արձանագրություն և անունը հաստատող վիմագիր: Ստ. Օրբելյանը նշում է, որ Մաշտոցն ու Մարիամը կառուցել են Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները: Նույն Ստեփանոս վարքագիրը Սևանա կղզում հիշում է «Եկեղեցիք երեք»: Ինչպես տեսանք Դամիել բարունապետի հիշատակարանից, երրորդ եկեղեցին Ս. Կարապետն է:

Ուրեմն այս երեք եկեղեցիները գալիս են իններորդ դարից իրենց անուններով, որոնց 10-րդ դարում միանում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:

19-րդ դարի ուսումնակիրությունը /Գուլասպյան Կյումուշխանեցի, Շահնայքումյանց, Մբրատյանց, Լալայան/ Ս. Աստվածածնա եկեղեցուն կից հիշում են Ս. Սարգսի կամ Ս. Մի-

¹⁹ Նոյն գլուխ, էջ 53:

²⁰ Խ. Տոկարսկի, Արհետուրա Արմենի IV-XIV աւ., Երևան, 1961, շր. 287.

նաև մատուի գոյության մասին, որն ինչպես այն չորս և կեղեցիները, չի ունեցել իր իսկությունը հաստատող վավերագիր: Չեռագիր հիշատակարանը ճշտում է նաև այս հուշարձանի անվանումը՝ Ս. Սարգսիս²¹:

Այսպիսով Սևանում գրված ձեռագրերի հիշատակարանները ճշգրտում են տեղի եկեղեցիների ամուսները, շինարարության թվականը և արձանագրության բնույթը:

Այժմ Բյուրականի Արտավազիկի մասին.

«Արդ աւասիկ կոչի մատուն փոքրիկ, պրածայր կաթուղիկի և է յարևելակողմն Բիրականայ, ի մէջ փոքրիկ ձորոյն՝ յարևմտեան եզեր փոքր ջրոյ ձորակին: Այս մատուն կայ ի կանգուն ցամն 1840, այլ ի գարնան այնու ամի ամենալ խոնարինեցաւ ի հեղեղաց ջուրց ձորոյն, - գրում է Հ. Շահիսարունյանցը և շարունակում: - Վասն ամուսնակոշութեան և շինույթեան այսր մատրան աւանդեն բնակիչք, թէ ի հնումն սրբակեաց այր ոմն ի ճգնող արանց, վախճանեալ աստէն՝ մնայ անթաղ: Եւ ապա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևանաց քահանայի ուրումն և քերեալ հանդէա այնմ տեղուց ի բարձրավանդակ ինչ վայր, որ է ի մատրանէն յարևմտեան հիւսիս, յարևմտեան եզեր ձորակին, ցուցանէ զմարմինն վախճանեալ ճգնատրի, ասելով՝ Արդ աւասիկ, երթ և ամփոփեա զայն:

Զարդուցեալ նորա ի քնոյ, գնայ անդու և որոնեալ գտանէ զմարմինն յարևմտեան եզեր ջուր ձորակին և անդ ամփոփէ ի շիրիմի, յորոյ վերայ կառուցանեն ապա խաչվէմ մնծ, որ կայ և ցարդ, և զմատուն սրածայր կաթուղիկի հանդէա այնմ յարևմտեան եզեր այնու ջուրոյ»²²:

Այս մատուն այդպես էլ կոչվում է Արդավասիկ, Արտավազիկ, Արտավազիկ: Ինչ են պատմում ձեռագրի հիշատակարանները. Մկրտիչ գրիչը 1469 թ. ավարտում է մի Տաղարամ՝

«... Ակիզբն և աւարտ լինի

ի Բուրական, ընդ հովանեաւ

Տեղերոյ Սուրբ Աստուածածնին

Եւ Սուրբ Լրջակին և Սուրբ Յովաննէսիա»²³:

Գրիչը նոյն ձեռագրի մի այլ էջում գրում է. «Գրեցաւ... ի մենարանի Բիրակամի, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Նշանի, և Սուրբ Յովաննէսի, այլ և ամենայն սրբոցս, որ աստ կան հաւաքեալ: ...Յայսմն ամի շինեցաւ պարիսան Տեղերոյ Սուրբ Աստուածածնի, ձեռամբ Սարգսի Վարդապետի, որ կոչի Բիրակամցի»²⁴:

Այստեղ երկու անգամ հիշվում են Տեղերոյ Սուրբ Աստուածածնն ու Սուրբ Հովհաննեաց: Վերջինն՝ Սուրբ Հովհաննեաց, գտնվում է Բյուրական զյուղը երիզող ձորակի ափին և կառուցված է Հովհաննեա Կաթողիկոս Դիրաստանակերտոցու (Կթոլ. 897-929 թթ.) միջոցներով: Երրորդ հուշարձանը մի անգամ հիշվում է Սուրբ Լրջակ, մյուս դեպքում Սուրբ Նշան անուններով, հավանաբար իրար մոտ կամ միանմանքներում կառուց-

²¹ Ա. Ղազարոսյան, Սևանա կղզու և կեղեցիները, լ. 2 56:

²² Հ. Շահիսարունյանց, Սպորոզություն կաթողիկ. Էջմիածնի և հինգ գալատացն Այրարադայ, հ. Բ, Էջմիածնի, 1842, լ. 73:

²³ Լ. Խաչիկյան, ԺԵ դ. հայերևն ծերուագրի հիշատակարաններ, հիք. Բ, Երևան, 1958, էջ 289:

²⁴ Նույն դիմում, լ. 290:

վելու պատճառով:

Ապարանի շրջանի Արագած զյուղում պահվում է 1486 թ. գրված մի Ավետարան: 1599 թ. այն նորոգվում և կրկին տրվում է Տեղեր Ս. Աստվածածնին: «Դարձեալ ես զսլոր Աւետարան ի դուռն Սուրբ Աստուածածնին և Լրջակա Սուրբ Նշանին... Մի ոք իշխեսցէ գրաւել և տափ ամել և կամ հանել ի դրանէ Տեղերա, զի մի պատիժն կրեսցէ յԱստոծոյ, այլ մնա անջինը յիշատակ ի դուռն Սուրբ Ովստին Տեղերա... Առողքեցաւ սուրբ Աւետարանս... ի յամենաւրինեալ զիւղն Բյուրական, որ է յուռն Արագածու, ի հարաւոյ կողմանէ ակնահայեաց Սուրբ Էջմիածնա, ընդ հովանեսա զարմանաշէն սիրակառոյց կաթողիկէի Սուրբ Յովաննէսի և Սուրբ Սարգսի Զարավարին և այլ սրբութեանց որ աստ կամ²⁵»:

Նախորդ «Սուրբ Լրջակի» և «Սուրբ Նշանի» փոխարժեն պատեղ ունենք «Լրջակա Սուրբ Նշան»: Նշանակում է, դրանք մի հուշարձանի կամ նույն հուշարձանի երկու՝ իրար հետ կապված մասեր են:

Պարզենք, թե ինչ է նշանակում «Լրջակ»: «Զվարթուն», «արթուն», «լուրջ», «պատիք» բառերը նույն իմաստն ունեն, որոնցով բնորոշում էին հրեշտակներին: «Զվարթուն»-ից Սուսապարի տաճարն ստացել է «Զվարթոնց», «հրեշտականց», իսկ «լուրջ» բառից՝ «Լրջակ» անունը /Բյուրականի Ս. Նշանի դիմացի եկեղեցին/: Հենց այս «Լրջակ»-«հրեշտակ» անվան վրա է խարսխված «Արդաւասիկի» ավանդությունը, ըստ որի, հնչան վերևում տեսանք, հրեշտակի կանգնած տեղում եկեղեցի է կառուցվում, իսկ ճգնավորի թաղման տեղում՝ հետագայում խաչ է կանգնեցվում:

Լրջակը, հավանաբար, կառուցել է Հովհաննես Դրասխանակերտցի Կաթողիկոսը, Սուրբ Հովհաննեսի տաճարից հետո: «Հայոց պատմության» մեջ նա հիշում է, որ իր միջոցներով Բյուրականում ձեռք բերած ամրոցում կառուցում և հարդարում է մի եկեղեցի հաստախինն, կտրած, տաշած քարերով, պանծալի շքեղությամբ և նկարակերտ հորինվածքով: «Ապա շինեցի և վանք,- գրում է նա, - որի մեջ ճգնավոր վաճականներ հաստատեցի»²⁶:

Լրջակը գտնվում է Զրվշտիկ ձորակի ջրատարի աջ եզրին, խաչքարը՝ դիմացի՝ ձորի բերանին, գերեզմանի մոտ: Դրանից հյուսիս գտնվում են հին շինությունների մնացորդներ, հավանաբար երբեմնի ճգնավորական պատառականներ: Մեռած ճգնավոր, հրեշտակ, Ս. Նշան, Լրջակ, Շգնավորների վանք, այս բոլորը միավորվում են Բյուրականից արևելք ընկած Զրվշտիկ ձորակի մեջ մի հատվածում:

Հիշատակարանները ճարտարապետական կառուցների վերաբերյալ հաճախ տարաբնույթ տեղեկություններ են հանդիպում, որպիսիք չկան վիմարձանագրություններում: Աղթամարցի նշանավոր գրիչ Դանիելը, Թովմա Արծրունու Պատմության հիշատակարանում, անդրադառնալով գրիչ պատվիրատու, Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունուն, գրում է, որ «եղև աղիթ շինութեան եկեղեցեաց, ևս առաւել գերահոչակ և սքանչելագործ սուրբ եկեղեցոյն Սուրբ Խաչիս Աղթամարայ»²⁷:

Այստեղ 1303 թ. նույն «Պատմությունը», Զաքարիա Կաթողիկոսի պատվերով, Դամիե

²⁵ Ա. Պետրոսյանց, Ապարանի շրջանի ձևոագրեր, ՊԱՀ, 1981, հմբ 1, լ. 152-153:

²⁶ Հովհաննես Դրասխանակերպցի, Պատմություն Հայոց, Թիֆիս, 1912, լ. 336 :

²⁷ Լ. Խաչիկյան, ԺԴ Դարի հայերն ձևոագրուի հիշատակարաններ, Երևան, 1950, լ. 13:

Աղյամարցին ընդօրինակում է՝ Ստեփանոս Օքբելյանին Ավիրելու համար²⁸: 1306 թ. Զաքարիա Աղյամարցի Կաթողիկոսը (կթղ. 1296-1336 թժ.) այս նույն Դանիելին Աղյամարում ընդօրինակել է տալիս մի այլ ձեռագիր՝ նորակառուց այս վանքին Ավիրելու համար: Հիշատակարանում կարդում ենք. «...Զաքարիա Կաթողիկոս Հայոց ցամկացող եղեաւ... աստուածունակ տադիցս... և շնորհեաց զսա ի յաղող քաջ նահատակմ՝ ի Սուրբ Գեորգն Լմայ, զոր և վերատին ի հիմանէ հաստակառոյց շինութեամբ արձանացոյց՝ սրբազործ խաչադրոշմ յօրինամբ, ամենիմաստ հնարաւոր ձևակերպութեամբ: Զոր բազում ծախիր և աշխատութեամբ բերեալ զմիթ քարանց սորա ի վերա մկանաց անդադառու ծովուն, ի յերկրէն Քաջերունեաց, ի մեծ լեռնեան, որ կոչի Քաջաց Կայանք»: Հիշվում է նաև «զրագմերանիկ կրօնաւորն զնաշիկ... զի յոյժ և բազում աշխատանք կրեաց յաղազս շինութեան սուրբ եկեղեցուն Սուրբ Գեորգեայ»²⁹:

Այսուեղ ամեն ինչ ասված է որոշակի, բացի եկեղեցու հիմքից նորոգման ավարտի թվականից: Այն կարող է լինել մինչև 1306 թ. կամ հետո 1306-ին, այսինքն՝ ձեռագործ ավարտման թվականին:

Հիշատակարանից իմանում ենք, որ Զաքարիա Կաթողիկոսը վերատին հիմքից կառուցում է եկեղեցին՝ Լիմի Ս. Գեորգը, հաստաթեղուս, խաչադրոշմ հորինամբ, որ դրա համար քարեր բերվել է Քաջերունյաց գավառի Քաջաց Կայանք լեռների քարհանքից, նավակներով հասցվել կղզի, որ այդ գործում Կաթողիկոսին օգնել է կրոնավոր Խաչիկը: Վերջինս շարքային կրոնավոր չէր անշուշտ:

1310 թ. Զաքարիա Կաթողիկոսը Լիմ կղզու Աքրահամ գրչին մի Մ'աշտոց է ընդօրինակել տալիս «ընդ հովանեաւա... Սրբոյն Գեորգայ Առուակազմ տաճարիս»³⁰ և հիշատակարանի վերջում գրում «Կտակագիր Զաքարիա Ա. Աղյամարցի Կաթողիկոսի», ուր հիշվում է Ս. Գեորգի նորոգման թվականը և էլի ուրիշ շինարարական մանրամասներ: «Ծնորհաւը ամենազարին Աստուծոյ, ի թուականութեան Հայկազեան տոմարիս ԶՄԴ /1305/, յաշխարհակալութեան յազգին նետողաց Աւշարու սուլթանին»³¹, ես նուաստ տէր Զաքարիա Վերադիտող Աղյամարյա, ի հիմանց նորոգեցաք զտաճարն Սրբոյն Գեորգայ Զարավարին ի Լիմ կոչեցեալ կղզուց, աշակցութեամբ Յովհաննես Եպիսկոպոսի Արծրունու՝ ազգակցին իմոյ, վաճառիար սուրբ անապատին:

Նաև նորոգեցաք Սուրբ Սահակայ³² և զԷջմիածնայ վանքերն մերձ ի յէրերին գիտ, որք սեպհական կալուածք և ազարակատեղի հաստաթեալ կային ի ճախմեաց անտի Լիմ սուրբ անապատին:

Ընդ սոցին շինեցաք ըստ խնդրանաց միաբանութեան և զընծայից և Սուրբ Աստուածածնի ուխտն: Նաև զբազում արտորապս և մարգագետինն գնեցաք ի դաշտն Բազայ՝ հան-

²⁸ Նոյն գլուխում:

²⁹ Նոյն գլուխում, լ. 40-41:

³⁰ Նոյն գլուխում, լ. 67:

³¹ Ղազաք խանի հաֆորդը, երա նորայը՝ Ուշկյութուն (1304-1316). անվանվում է. նաև Մուհիամնդ Խույարանա (Ճառա Ասպրուն):

³² Կասպուրականի Գունիք կամ Թիմար գավառում, Երերին վյուղի հարավային կողմուն լ. ընկած Ս. Սահակ վահրդ: Այսպիս իիշված րուրո վամբըրը և հուշարձանները գվնվում են նոյն զավատում:

ներձ բոլոր սահմանագր, արդեամբ Լիմ սուրբ անապատին վասն Ընծայից ուխտատեղույն և թողար զնա իբրև հիւրանց նոյն անապատին, որպէս յառաջազոյն ի մեծն Ներսէս Սրբազն Հայրապետէն հաստատեալ կայյ»³³:

Այնուինու կտակագրում Զաքարիա Կաթողիկոսը թվարկում է Լիմ անապատին «ի սեպիական հայրենի ժառանգութեան մերմէ կտակ» արած հողերն ու զյուղերը և վերջում գրում. «և յիշատակութիւն տցին գրեալ տուաք համառատ ի յորմ տաճարին Ամայ/ և զընդարձակ ի կողմն ձեռագիր Մաշտոցին»³⁴:

Այսօր Լիմ կողու ո՛չ Ս. Գեորգ տաճարը կա, ո՛չ նրա պատը՝ Զաքարիայի արձանագրությամբ կամ նրա ընդօրինակությունը, ո՛չ էլ նույնիսկ Աբրահամ զրչի արտագրած ձեռագիր Մաշտոցը՝ հիշատակարանով ու կտակագրով: Սակայն հիշատակարանն ու կտակագիրն անցյալ դարի վերջին Ղ. Փիրդալամյանն արտագրել է «Նշանաք պատմութեան Հայոց» իր աշխատության Բ հատորում (ձեռ. հմր. 4515, 6263), իսկ 1907 թ. Օ. Բարդամյանը՝ Կոտորից, Լիմի և Վարազմ վանքերի ձեռագրերի ցուցակում (ձեռ. հմր. 6333, էջ 100-101)³⁵:

Հիշատակարանն ու կտակագիրն այսպես փրկվել-հասել են մեզ, իրենց մեջ պահելով ոչ միայն Լիմի Ս. Գեորգ եկեղեցու շինարարության հետ կապված մանրամասները, այս Զաքարիա Կաթողիկոսի շինարարական, Ավիրատվական ու ազգային-հոգևոր գործութեանցունը ներկայացնող վկայությունները: Ինչպես հիշատակարանում է ասվում. «Քիաւատս Հայոց նոր գմեաց ի յանարէն առաջնորդաց, և զեկեղեցին ազատեաց Աստուծոյ տեսչութեամբն և ձեռագր իրովք»³⁶:

Դանիել Աղթամարցու հաջորդ վկայությունը վերաբերվում է Վան քաղաքի Ս. Վարդան եկեղեցու շրջակայրում մինչև 1316 թ. կատարված շինարարությանը: Տիրացու կրոնավորը «որ է դպրապետ, և՝ առաջնորդ, և՝ տէր Սուրբ Վարդանայ, որ է ի Վան քաղաք, որ է իր սեփական, զոր բազում ծախիք և աշխատությամբ յարինեաց ի նմա շինուածս բազում»: Ինչ կառուցումներ է կատարել վանքի շրջապատում, հայտնի չէ: «Այլ և յարդար վաստակաց իրոց գմեաց բազում ոխվս յանուն Սուրբ Վարդանայ, զի ի նմա հանգիցնեն նեղածք և հիւանդք և ախտածէտք, յաղաց բժշկութեամ»³⁷:

³³ Ա. Մաթևոսյան, Լիմ անապատի գրչության կննդրունք, ԺԳ-ԺԵ դարեր, «Եջմիածին», Զ, 1966, լ.ջ 54-55:

³⁴ Նոյն փնդում, լ.ջ 54:

³⁵ Նշված ընդորինակությունների համամարտական թեավիրը կազմել ենք և հրապարակել 1966 թ. վերը Նշված մեր ուսումնասիրության մեջ. Հավանվածում, հիմք ընդունելով Օ. Բարդամյանի ընդորինակությունը: Տարրելություններն անելուն են, եթե հաշվանքը ուղղակրությունը: Միայն Ն. Փիրդալամյանի արդարությունը, 1968 թ. հրապարակել է. Ն. Փափառյանը, Նշված կափածագրի պարսկերն օրինակի թարգմանության ծանրթափության մեջ («Կափածագրեր», պր. Ա (ԺԴ-ԺԶ դդ.) կազմեց Ն. Փափառյան, Երևան, 1968, 47-53 վավերագիրը / լ.ջ 138-139):

³⁶ Բանես այս լ., որ մնեդունքը Դագուս խանի (1295-1304 թթ.) ժամանակ, ընդունելով իսլամի, ումենացնում են հապածակը Հայաստանում, ճամբարացնում հարկերը. «Նեղեն զամնեայն թիստուննայր դառնաւ ի պատիր յոյս իրևանց... զոմ քանակնեն, զոմ սպանանեն... այ և նոյն ի վերա ամնեայն թիստուննայր հարկան և նշան նախարարակը ի վերա ուսուց թիկանց կիրաս սնեաս, զի որք վեսցնես զնոսս, ճանաչնեցնեն կթի թիստուննայր են և հայինեացնեն (ԺԴ-Դ դարի հիշատակարաններ, լ.ջ 47): Մի այլ գրիչ լրացնում է. «փ իխսվ և յանինարին հարկապահածորենն, ճախնաւ ինին ուսպերը և դափնը աշխարիս մեր, և բազում զեղը և վանորայք աւ.լ. և անհագիս» (Նոյն փնդում, լ.ջ 66): Զաքարիա Կաթողիկոսը կարողանում է. հանել փառ խայրատակության նշանը և փրկել նվելսկիմները:

³⁷ ԺԴ-Դ դարի հիշատակարաններ, լ.ջ 120:

Ուրեմն Տիրացու կրոնավորը բազմաթիվ շենքեր է գտում և նվիրում Ա. Վարդան նկեղեցուն, որոնցում անվարձ և անհատույց մշտապես բնակվում են Անդյալները, տնազորությունը, հիվանդները, ախտացյալներն ու ցավազարները՝ «յանուն բժշկութեան»: Բնական է, որ առ հոգացել է ոչ միայն Անդյալների ու բժշկվողների, այլև նրան խնամողների ու բուժողների հոգաւորը: Հիշատակարանները վկայում են շինուազումները կառուցող անձանց մասին.

Հակոբ Կիլիկեցի գրիշն ավարտում է մի ձեռագիր /Մատենադարան ձեռ. հմր. 5077/ «... ի թվականին Հայոց ԶԿ/1311/, յանապատեր Սրբոյն Գրիգորի, ընդ հովանեաւ Սրբոյ Կարապետին և Սրբոյն Մինասա, և Նորաշէն Սուրբ Աստուածածին, որ յայս ամի, բազում շանիւ և աշխատութեամբ շինեալ եղև ի գերանչակ ռարունապետէն Մովսիս»³⁸:

Սուրբ Գրիգոր ամապատը գտնվում է Սեպորի լեռան վրա, Եղանձնաքարշի մոտ: Ամապատում են գտնվում Լուսավորչի դամբարանը, լուսավորչաշեն Ա. Կարապետը, որը կոչվում է Առաք Վաճք, և Ս. Մինասը՝ մերձակալքում: Առա այսուել կառուցվել և 1311 թ. ավարտվել է Ս. Աստվածածին նկեղեցին, Մովսես ռարունապետի ձեռքով:

Մովսես Եղանձնաքարշի ռարունապետող Գևորգ Սկևորացի Աշանավոր ռարունապետի աշակերտն էր: Ուսուցչի մահից հետո (1303 թ.) դեռ Կիլիկիայում էր և մի Անդրբոյան էր գրել՝ նվիրված իր ուսուցչին: Որոշ ժամանակ անց վերադարձել է հայրենի Դարանայաց գավառ և այնտեղ դպրոց բացել: Ե՞րբ է վերադարձել: Այդ մասին պատմում է նրա աշակերտ Գրիգորը. «Մանենեամբ էի յերկրէն Խարբերդոյ, ի գաւառէն Ցաղման կոչեցեալ, և մայրական գրկօք եկեալ ի գաւառն Եկեղեց, և անդ անեալ ի մեծանուշակ վաճքը Տիրաշէն և անդ ուսեալ, որպէս ասացի, և կրօնաւորեալ:

Իսկ յետոյ ի գալ Վարդապետին Մովսիսի ի Կիլիկիոյ բազում գրենօք, յորդորեալ և առեալ զմեզ բնակեցաք ի Դարանաղեաց գաւառն, ի լեռան սուրբ և մեծ Լուսատրչին մերոյ ամս վեց»³⁹: Գրիգորն այս հիշատակարանը գրում է 1314 թվականին Գլածորում, ուր եկել էր սովորելու: Մինչ այդ հաւաք տարի սովորել էր Մովսես ռարունապետի մոտ, ասել է՝ 1303 թվականից: Այդ թվականին Մովսեսն արդեն հայրենի գավառում էր: Այսինքն՝ Ս. Աստվածածին շինարարությունը սկսվել է 1308 թ. հետո և շարունակվել մինչև 1311 թվականը:

1313 թ. Ակների վաճքում Գրիգոր գրիշը գրում է. «Ի սոյն ամի սկիզբն արարաք շինման բերդին, որ ի Քարտիզկնոցն»⁴⁰: Այս մասին Ղ. Ալիշանը գրում է. «Ոչ յայտ որպիսի իցէ բերդն, այլ աւելի հետաքաննելի է պատճառ անուան տեղույն. Թղթարան արդէօք Աշանակեր ըստ սովորական իմաստի քարտեալ բարի՝ թէ այլ ինչ»⁴¹:

Բերդը գտնվել է Ցախոստն գավառում: Սկևորի առաջնորդ Կոստանդին Պետեանեցու 1314 թ. ստացած երկու ձեռագրերի գրիշները հիշում են վաճքի պարիսպների շինարարության վերակացու, հանգուցյալ Հակոբ քահանային: Ներսեսը հիշում է. «Վասն սիրայորդոր փութոյ պրճիս և յամար կամաւաքանութեան ի վերակացութեան շինութեան պրճիս»: Հովհաննեսն իր ձեռագրում, նույն նախադասության մեջ, երկու անգամ համեյիպող «պրճիս» բառի փոխարեն գրում է «տաճարիս»: Պետք է ընդունեալ, որ երկուսն ել նոյն բառը են

³⁸ Նոյն փեղում, լշ 79:

³⁹ Նոյն փեղում, լշ 103

⁴⁰ Նոյն փեղում, լշ 97:

⁴¹ Ղ. Ալիշան, Միտուն, Վենետիկ, 1888, լշ 154:

ասում, մեկը՝ որոշակի շինարարության տեղամասը՝ բորգերը, մյուսը՝ տաճարը, որից պատկանում են բորգերն ու պարիսպերը⁴²:

Այստեղ հետաքրքրական է Հակոբ քահանայի՝ շինարարության ղնթացքում զբաղեցրած պաշտոնը՝ «վերակացութիւն շինարարութեան»-ը:

Մաթեոս Վարդապետը, որը նաև ծաղկող է, 1292 թ. հիշատակարանում գրում է. «Հրամանաւ և ձեռնուվութեամբ Ամիրա-Հասանա շինեցի գոտիիք միայբանայքնակ վաճա, և շինեցի գեկեղեցիք և զժամատունս»⁴³ Վայոց ձորի Սուլավ անապատում: Միջոցները տրամադրել է Ամիրա Հասան իշխանը: Մաթեոս Վարդապետը հիշյալ տեղում կառուցել է վաճի եկեղեցին, ժամատունը:

Մինասենց Թուումա Աշամավոր գրիչը 1445 թ. մի հիշատակարանում որոշում է «ակաւ ինչ պատմութիւնս արժանիս յիշատակի զծագրեցից... զի զկմի մեր եկողքն զիտացեն թէ յորո՞ց ոմանց շինեցաւ և յորո՞ւմ ժամանակի սուրբ ուստու ալս... որ կոչի Սուլր Յակոբ, որ էր ի բազում ժամանակաց աւերակ լեալ և անքնակ ի մարդկանէ»⁴⁴:

Այդ եկեղեցին գտնվում է Ռշտունյաց աշխարհի արևմտյան սահմանի Կապուտակողանա քերդի առջև. «Է շինեալ գումբեթաձև և երկնամնան»: Առաջին շինությունը եղել է Վասպուրականի Սեմեքերիմ թագավորի և նրա որդիների ժամանակ, երբ Մանաճիրը Ռշտունու քուրը ոտքով զնում է Նըսերին /Մծրին/ և քերում Հակոբ Մծրնեցու ճկույթը, «աշխարհաժողով արարեալ թագաւորն Հայոց շինէ զիտաւոր եկեղեցիք»՝ զՍուլր Աստածածինն և զՍուլր Յակոբն և զՍուլր Թովհաննես և զՍուլր Մանկունքն, և ժողովեալ բազում կրօնաւորս՝ առնէ զնա Վաճա միաբանակեցաց թագմաց, մինչ զի ասի աւանդութեամբ, թէ քան զերեք հարիւն աւելի արեղայ եղեալ է ի վաճրս ալս»: Ապա թագավորը հողեր, զյուղեր է նվիրում Վաճին և փարթամացնում երկար ժամանակով: «Եւ այս առաջի շինութիւնս յառաջ էր քան զիայ թուականն (այսինքն՝ 551 թ.- Ս.Մ., Ա.Ղ.):

Բայց զկմի ժամանակաց աւերեալ տեղիքս՝ լինի անմարդաբնակ, իբր զբողաբլուր մի մեծ, ոչինչ մնացեալ Աշան շինութեան, բայց միայն եկեղեցիքն ամշարժ մնացին: Եւ թէ զի՞նչ եղև պատճառ աւերմանն և քանի՞ ամ մնաց աւերակ՝ ոչ զիտեմ հաստատ, բայց կարծեօք թուի թէ քան զերկու հարիւր տարի աւելի աւերակ մնաց»⁴⁵:

Եվ ամա, 1412 թ. Ստեփանոս անունով մի երևելի վարդապետ, մականվամբ Փիր բարեւեր և աստվածային շնորհներով բարգավաճ, Ռշտունյաց Բախվանից զյուղից, որ աշակերտել էր Հովհան Որոտնեցուն, եղել էր Հոռոմաց աշխարհում, Երուաղենում և վերադարձել հայրենիք՝ «խորիրդակից և գործակից ինքեան առեալ կրօնաւորս աստուածաւերս, որոց անուանը յորչորչեալ կոչին Մկրտիչ և Կիրակոս, Թովաննես և Թոհմաննես, Սիմեօն և Գրիգոր, և եկեալ ի մեծաթոշակ և թագաւորաշէն ուստու, որ կոչի Սուլր Յակոբ, որ էր ի բազում ժամանակաց աւերակ լեալ և անմարդաբնակ»⁴⁶:

Այստեղ Գրիգոր և Հովհաննես կրոնավորները և՛ ճարտարապետն, և՛ կառուցողն էին:

⁴² Տես ԺԴ դարի հիշապակարաններ, լ.ց 106-108:

⁴³ Ա. Մաթեոս ոսյան, Հայնրեն ձևոազերի հիշապակարաններ, ԺԳ Դ., Երևան, 1984, լ.ց 676:

⁴⁴ Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հիշապակարաններ, հգ. Ա. Երևան, 1955, լ.ց 580:

⁴⁵ Նոյն գրնում, լ.ց 580:

⁴⁶ Նոյն գրնում, լ.ց 581:

1435 թ. Զմշկածագում «ձեռաք Արևշաբին շինեցաւ սուրբ Յարութիւնն, ի զիւս Երկայն /Ըն/կողիք»⁴⁷: Խսկ 1447 թ. Ամիդում. «Եւ բնակիչը քաղաքին՝ քահանայք և ժողովուրդը, միարան ազնական եղեմ՝ աշխատելով. դրամ տալով, կերակոր բերելով. մշակ տալով, աղքատ և մեծատունք միամիտ քաջութեամբ և բոլոր հաւատով ջանացին, և ի Ժ/10/ արճ կատարեցին զղուապի ի շինեցոյ:

...Եւ կատարեցաւ Սուրբ Կաթողիկէն ի ՊՂԶ /1447/ թուին, լաւգոստոս ամսոյ ի Զ /6/ յաւուր երկուշաբթի, ձեռամք վարպետ Ներքամատին»⁴⁸:

Վերջին հիշատակարաններում կառուցող Մաթևոս վարդապետը, Արևշաբ և Ներքամատ վարպետները, Հովհաննեսի, Գրիգորի և Հովհաննեսի նման նույնպես կառուցողներ և ճարտարապետներ են, որովհետև ամենուր հիշված հովանավորողների և աշխատողների ընդհանուր շարքում նրանք առանձնանում են շինարարությանը մասնակցելու իրենց մակարդակով: Նույնը վերաբերվում է նաև շինարարության վերակացու Հակոբին, որը Սկսուափի պարսպի բորգերի շինարարական աշխատանքներն էր դեկավարում:

«Մաշտոց» ծիսական ժողովածուի «Հիմնարկէք եկեղեցւոյ» բաժնում ապօն է. «...Եւ ապա հրամանէ [Խպիսկոպոս] ճարտարապետին՝ առնու զգործի չափոյն և զծագրէ տեղին ըստ կամաց շինողին և ապա Տեառնազրէ սուրբ իիղովն զքարինս երկոտասամ և չորեսին անկիւնս...»⁴⁹

...Ապա առնու եպիսկոպոսն զբրիչն ի ձեռն և հարկանէ գերկիրն, զոր ծրագրեալ է արևոտատրին»⁵⁰:

Այստեղ որոշակի երկու անձի հետ զործ ունենք. ճարտարապետը, որը չափելու զործիքը ձեռքին տարածության վրա նշում է այն կետերը, որ նախատեսել է շինողը, ըստ որի էլ եպիսկոպոսի թեկադրանքով ճարտարապետը երկրի, հողի վրա նշումներ է անում: Փաստորեն եկեղեցին հիմնարկվում է գետնի վրա «ըստ կամաց շինողին»: Շինողի մտահացումը, նրա նախազիծը երկրի վրա մարմնավորում է ճարտարապետը: Ճարտարապետ՝ նշանակում է «Պետ ճարտարաց կամ շինողաց»:

Ստեփանոս Վահկացի գրիչը, ծաղկողը և որմնամկարիչը 1280 թվականին Ավետարան է պահպան Սիս մայրաքաղաքի Սուրբ Հոգի եկեղեցում, «որ յայս ամի,- զրում է նա,- վերստին նորոգեցաւ պատուական քարամքը՝ քերեալ ի ճարտարաց»⁵¹: Ուրեմն սրբաւատաց քարերով է նորոգվել Սուրբ Հոգի եկեղեցին, իսկ քարերը սրբաւաշել, «քերել» են ճարտարաները, քարկոյ վարպետները: Սրանք քարերն անշուշտ տաշել են իրենց դեկավարի կամ պետի հանձնարարությամբ, որի հետև և դեկավարությամբ էլ քարերը տեղադրել, պատ են շարել: Ճարտարների այդ դեկավարն էլ ճարտարապետ է կոչվել:

Երբ վկայություն է պահպանվել կառուցի հովանավորողների և այլ մասնակիցների մասին, ու առանձնապես նշում է շինողի գործունեությունը, հավանաբար նա է կառուցող-նախազծողը: Մանավանդ, երբ հետագայում հուշարձանը նրա անունով է մական-

⁴⁷ Նոյն փեղում, լ. 450:

⁴⁸ Նոյն փեղում, լ. 629:

⁴⁹ Մաքրեսադարան, ձևո. հմբ 895, լ. 3:

⁵⁰ Նոյն փեղում, լ. 12:

⁵¹ Ա. Մաթևոսյան, Հայերն ծնուազրերի հիշարտակարաններ, ԺԳ դար, լ. 516:

վաճում:

«Յայսմ ամի՞ եղև աւարտ հոչակաւոր և խնդատես եկեղեցւոյն Գետկայ, զոր շինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօքն՝ ձեռնոտութեամբ՝ Վախթանկայ Խաչեցւոյն՝ տեառն Հաթերքոյ, և եղբարց իւրոց՝ Գրիգորոյ և Գրիգորիսի և Խոյդանայ, և Վասակայ և այլոց իշխանաց բարեպաշտաց, որուց Քրիմ, Դակթ և Սադումին, ճան քոյր սոցա, որում անուն էր Արզու Խաթուն, կին Վախթանկայ Հաթերքեցւոյն:»⁵²

Սա բազում ինչ օժանդակ եղև, արար և վարագոյր գեղեցիկ՝ դստերովք իւրովք...»⁵³: Դրվատում է Կիրակոս Գանձակեցին՝ թվարկելով բոլորին՝ օժանդակողներին, հովանավորողներին, նույնիսկ Վարագոյր գործողներին: Կառուցողն անվանապես չկա. «Ծինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօքն»: Ծինող-նախագծողը Մխիթար Գոշն է: Իրավամբ համալիրը կոչվել ու կոչվում է Գոշավանք:

Նույն պատմիչը Վանական Վարդապետին համեմատելով Հին Կտակարանի նահապետների մետ՝ գրում է. «Եւ /նման/ Յեսուայ նորոգող լեալ տաճարի Աստուծոյ» և «Ի վանսմ՝ զոր իւր իսկ շինեալ էր, որ կոչի Խորանաշատ վասն յոլով եկեղեցեացն... զահիթ շինելով ի կոփածոյ վիմաց, ի դուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր...»⁵⁴: Այսօր էլ այս վանքը կոչվում է Խորանաշատի կամ Վանական Վարդապետի վանք: Այդպես է գրում նաև Ստեփանոս Աղթամարցին 1223 թվականին Խորանաշատում գրված ձեռագրում. «ի թուիս ՈՀԲ /1223/ ի տաւնի Ատուածածնիս, ի վանք Խորանաշատու, շինեալ Վանականի իմ վարդապետիս»⁵⁵:

Մեզ թվում է, այստեղ էլ Վանական Վարդապետն է կառուցող-նախագծողը: Եվ պատահական չէ, որ Բիշատակարաններում Նոր Գետիկը Բիշվում է Գոշվանք, իսկ Խորանաշատը՝ Վարդան Վարդապետի վանք անուններով: 1252 թ., Վանականի մահից մետով, երկու տարի անց, Գրիգորը ձեռագիր է գրում «... ի վանս Վարդապետի Վանականի Խորանաշատ կոչեցեալ», «... ի վանս Վանական Վարդապետի» և այլն⁵⁶:

Ինչպես տեսմում ենք, հայերեն ձեռագրերի Բիշատակարաններում պատմավավերագրական հսկայական նյութը կա մեր հուշարձանների վերաբերյալ: Դրանք կօգնեն հուշարձանների համապարփակ ուսումնասիրության գործին, քանի որ գրված են ժամանակակիցների ու ականատեսների ձեռքով, ուստի հավաստի են ու անաշառ:

⁵² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, լ. 215:

⁵³ Նույն տիղում, լ. 346-347:

⁵⁴ Հայերևն ծեռագրերի հիշապակարաններ, ԺԳ դար, աշխ. Ա. Մաթենոյան, Երևան, 1984, լ. 136:

⁵⁵ Նույն տիղում, լ. 264, 589, տիւն նաև 926 լ.թ.: